



Եվրոպական միության ECEILAW ծրագիր Հայաստանում
Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն

Տեղեկատվական պարբերական

«Եվրոպան այսօր»

(հանդես 3)



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



Ծրագիրը իրականացվում է
GOPA Խորհրդատվական
ընկերության կողմից

Տնտեսական հարցեր

Պետական ֆինանսները և մակրոտնտեսական զարգացումը

Պետական ֆինանսների ազդեցությունն իրական տնտեսության վրա շատ բազմակողմանի և բարդ գործընթաց է: Այնուամենայնիվ ակնհայտ է, որ գոյություն ունի երեք հիմնական ճանապարհ, որոնց միջոցով պետական ֆինանսները կարող են խթանել տնտեսության և զբաղվածության աճը:

Պետությունը, ներդրումներ կատարելով ֆիզիկական (ենթակառուցվածքներ) և մարդկային (կրթություն և ուսուցում) կապիտալի հնչպես նաև գիտելիքի մեջ (հետազոտություն և զարգացում, նորարարություն), խթանում է արտադրության գործոնների կուտակում՝ ուղղակիորեն օժանդակելով տնտեսության և զբաղվածության աճին: Երկարաժամկետ ժամանակահատվածում սա դրական ազդեցություն է ունենում արտադրության և տնտեսական աճի վրա: Սակայն, եթե աճող պետական ներդրումները ֆինանսավորվում են հարկերի բարձրացման շնորհիվ, կամ եթե արդյունքում ավելանում է բյուջեի պակասուրդը և հետևաբար պետական պարտքը, ապա դա կարող է դուրս մղել մասնավոր ներդրումները:

Ազդելով բնակչության և գործարարների աշխատանքի, խնայողությունների և ներդրումների որոշումների վրա հարկային և կենսաթոշակային համակարգերը զգալի ազդեցություն են ունենում իրական տնտեսության վրա: Սոցիալական ուղղվածություն ունեցող շուկայական երկրներում պետությունը շատ կարևոր դեր է կատարում շուկայի բացերի լրացման ու սոցիալական ապահովման գործում և դրանց միջոցով օժանդակում է տնտեսության և զբաղվածության աճին: Արդյունավետ/ռացիոնալ սոցիալական ապահովման համակարգը կարող է դիտարկվել որպես «արտադրության» գործոն: Սակայն, անհրաժեշտ է համոզվել, որ հարկային և կենսաթոշակային համակարգերը խթանում են զբաղվածության աճը:

Կայուն մակրոտնտեսական միջավայրի ապահովում

Առողջ պետական ֆինանսներն օժանդակում են մակրոտնտեսական կայունությանը և նպաստում են դրամավարկային քաղաքականությանը պահպանելով կայուն գներ ցածր տոկոսադրույքների պայմաններում: Երկու դեպքում էլ դա նպաստում է մասնավոր ներդրումներին և խնայողություններին: Առողջ/կայուն պետական ֆինանսները՝ նվազեցնելով պետական պարտքը և համապատասխանաբար հարկային բեռը, ստեղծում են պայմաններ հարկերի նվազեցման և/կամ ավելացնում են արդյունավետ պետական ծախսերը: Վերջապես առողջ/կայուն պետական ֆինանսները երկարաժամկետ հատվածում նաև կիրանեն տնտեսության և զբաղվածության աճը՝ օգնելով երկրներին հաղթահարել պետական ծախսերի ավելացման զգալի ճնշումները, որոնք, մասնավորապես, կապված են բնակչության ծերացման հետևանքով կենսաքրոշակային և առողջապահության ոլորտում ծախսերի աճի հետ:

ԵՄ շրջանակներում պետական ֆինանսների զարգացումը, ներառյալ ԵՄ ֆիսկալ կառուցվածքի վերահսկումը պարբերաբար ենթարկվում է վերլուծության և մոնիթորինգի Տնտեսական և ֆինանսական հարցերով գլխավոր տնօրինության կողմից (DG Economic and Financial Affairs): Ամեն տարի վերլուծության արդյունքները հրատարակվում են «Հանրային ֆինանսները Եվրոպական արժութային միությունում» վերտառությամբ զեկույցում:

Ծխախոտի մաքսանենգությունը.

Եվրոպական խորհրդարանի անդամների գնահատականը ԵՄ և «Մարլբորո» արտադրող «Ֆիլիպ Մորիս» ընկերության միջև գործարքի մասին



ԵՄ և ծխախոտարտադրության հեկա «Ֆիլիպ Մորիս» ընկերության միջև հականաքսանենգության խնդրի շուրջ ստեղծված միությունը գովասանքի է

արժանացել Եվրոպական խորհրդարանի գեկույցում, որը հաստատվել էր 2007թ. սեպտեմբերի 12-ին: Առաջին հայացքից անհավանական թվացող այդ միությունը, որ ստեղծել էր 2004թ. այն բանից հետո, երբ հանձնաժողովը ընկերության դեմ գործ էր հարուցել, Եվրոպական խորհրդարանի անդամ՝ Բարթ Սթաեսի կողմից անվանվեց «ոսկե ստանդարտ»: Ծխախոտի մաքսանենգության ծավալները հսկայական են՝ նախորդ տարվա ընթացքում ԵՄ-ում առգրավված ծխախոտի միայն հարկային արժեքը կազմել է 460 մլն եվրո:

Ծխախոտը թերև և, հարմար է տեղափոխման համար և ամենակարևորը՝ դրա նկատմամբ կիրառվում է բարձր հարկային դրույքաչափեր: Մի արկող կարող է պարունակել 10 000 տուփ ծխախոտ: Սա ստեղծում է հսկայական եկամտի հնարավորություններ և, բնականաբար, գրավում է կազմակերպված հանցագործ խմբերի ուշադրությունը: Այդ խմբերից շատերը գործ ունենալով հսկայական գումարների և դրանց վտանգ սպառնացող իրավիճակների հետ, հաճախ դիմում են բռնությունների:

Որտե՞ղից է այդ ծխախոտը: Դրա մեջ մասը բերվում է Միացյալ Նահանգներից և պահպում է պահեստներում, որտեղից էլ տեղափոխվում է ամբողջ Եվրոպայով մեկ: Հենց այդ ճանապարհին էլ նրանք կարող են անհետանալ, այնուհետև կրկին մուտք գործել Եվրոպա՝ մայրցամաքով կամ ծովով՝ որպես արդեն մաքսանենգ ապրանք:

Խորհրդարանական հարցումը մատնանշում է մաքսանենգության պատժամիջոցների ուղիները

Ղերևս 1997 թ. խորհրդարանական լսումներ էին անցկացվել, որոնց ընթացքում առաջին անգամ արձարծվեց այդ հարցը և արդյունքում շոշափելի փոփոխություններ կատարվեցին գեխծարարությունը և սիգարետի մաքսանենգությունը կարգավորող օրենսդրության մեջ: Հանձնարարականների շարքում կային այնպիսի պատժամիջոցներ, որոնք կարող էին շատ լավ աշխատել անհատների և առևտուր իրականացնող ընկերությունների դեմ: Բելգիայի կանաչների կուսակցության Եվրոպական խորհրդարանի անդամ

պարոն Ստաեսը ներգրավված է եղել այդ հարցման մեջ՝ մի գործընթաց, որն իր բնութագրմամբ «իրական արկած» էր:

Հարցումը ևս մեծ ուշադրություն առաջացրեց ծխախոտային ընկերությունների շրջանում: Բնականաբար հարկերի կորուստը չի ազդում նրանց շահույթների վրա: Իրականում կարելի է վիճաբանել, թե արդյոք նրանք անուղղակիորեն շահում են դրանից, թե՝ ոչ: Հարցման արդյունքում պարզվեց, որ առավել էժան և ծխախոտի շուկան խրախուսում է պահանջարկը և հափշտակված ծխախոտի փոխարինումը նշանակում է, որ ավելի շատ պետք է արտադրվի և վաճառվի: Հարցման արդյունքների հիման վրա Եվրոպական հանձնաժողովը և 10 Եվրոպական երկրներ 2001 թվականին հայցադիմում ներկայացրեցին Նյու-Յորքի շրջանային դատարան՝ ընդդեմ «Ֆիլիպ Մորիսի» և որոշ այլ սիգարետ արտադրողների: Նրանք նշում էին մաքսանենգության հետևանքով կրած հարկային եկամուտների կորուստների մասին:

2004թ-ին կողմերի միջև կնքվեց հաշտության համաձայնագիր, որի համաձայն «Ֆիլիպ Մորիսը» պետք է վճարեր փոխհատուցում կորցրած հարկային եկամուտների համար: Այնուամենայնիվ, համաձայնագրի ամենակարևոր որոշումն այն էր, որ աշխարհում ամենալավը վաճառվող «Մարլբորո» ապրանքանիշը առաջարկեց մաքսանենգության դեմ պայքարելու գործում իր աջակցությունը:

Նրանք համաձայնվեցին սահմանել տվյալների մի ամբողջ բազա՝ օգնելով գտնել ծխածոտների հետքը և բացի դա ֆինանսավորել մաքսանենգության դեմ կիրառվող միջոցառումները, որը 12 տարիների ընթացքում կազմել է 904 մլն. Եվրո:

Միջազգային հարաբերություններ

ԵՄ - Ռուսաստանի բանակցությունները էներգետիկ հարցերի շուրջ

Էներգետիկ բնագավառում ռազմավարական գործընկերները հանդիպել են ներկա իրադրությունը և համագործակցության հեռանկարները քննարկելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՄ նավթի և գազի մատակարարումների 25%-ն իրականացնում է Ռուսաստանը, դժվար է գերազնահատել անխափան համագործակցության կարևորությունը: Սա նկատի ունենալով՝ ԵՄ-Ռուսաստան գագաթնողովի նախօրյակին՝ 2007թ. հոկտեմբերի 16-ին, Եվրոպական հանձնաժողովի հանձնակատար Անդրիս Պիեբալդսը և Ռուսաստանի էներգետիկայի նախարար Վիկտոր Խրիստենկոն հանդիպել են Բրյուսելում՝ յուրաքանչյուրն իր էներգետիկ շուկայի վերջին շրջանի զարգացումների շուրջ տեսակետներ փոխանակելու նպատակով:

Կողմերը քննարկել են էներգետիկ աճող արդյունավետությունը և այն, թե ինչպես ԵՄ վերջին ընդունած էներգետիկ փաթեթը կարող է ազդել Ենթակառուցվածքի վրա և ավարտին հասցրեցին առաջընթացի 8-րդ հաշվետվությունը՝ հիմք ստեղծելով հետագա համագործակցության համար: «Ռուսաստանը և Եվրամիությունը կարևոր ռազմավարական գործընկերներ են և մեր երկուսի շահերից է բխում այս հարաբերությունների հետագա ամրապնդումը: Իրական ԵՄ-Ռուսաստան ռազմավարական գործընկերությունը էներգետի ոլորտում պետք է ապահովի երկարաժամկետ կայունություն, անվտանգություն և կանխատեսելիություն երկու կողմերի համար», - ասաց հանձնակատար Պիեբալդսը:

Այդ հանդիպումից միայն 10 ամիս առաջ Ռուսաստանի և Բելառուսի միջև նավթի գների վերաբերյալ վեճը արդյունքում ընդհատվեց ԵՄ նավթամատակարարումը: Հաղորդակցության ուղիները բաց պահելը կարևոր երաշխիք է ապագայում նման դեպքերից խուսափելու համար:

Յարկ է նշել, որ համաձայն ԵՄ-Ռուսաստան գազաթաժողովում կայացրած որոշման, Ռուսաստանի հետ կանոնավոր բանակցություններ անց են կացվում սկսած 2000 թվականից:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐԻՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԼԿՈՒՄ ԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ և ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2007 թ. սեպտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում Ստրասբուրգում ԵԽ-ի անդամները քննարկել են վերականգնվող էներգիայի աղբյուրների և օտարերկրյա էներգիայի բնագավառում ընդհանուր արտաքին քաղաքականության մշակման հարցերը: Երկու քննարկումներն էլ ընթացել են ի պատասխան Եվրոպական խորիրդարանի անդամ՝ դանիացի սոցիալիստ՝ Բրիտտա Թոմսենի և լեհ պահպանողական կուսակցության անդամ Զասեկ Սարուժ-Վոլսկու սեփական նախաձեռնությամբ պատրաստված հաշվետվություններին:



Թոմսենի գեկույցում առաջարկվում էր արդեն 2020 թվականին ԵՄ էներգետիկ ռեսուրսների 1/5-ը օգտագործել վերականգնվող աղբյուրներից: Սարուժ-Վոլսկին իր գեկույցում կոչ է արել իրականացնել միասնական էներգետիկ քաղաքականություն, որը կղեկավարվի ամենաբարձր մակարդակով:

2007թ. մարտին Եվրոպական գազաթաժողովի ժամանակ անդամ Երկրները սահմանեցին ընդհանուր նպատակ՝ ԵՄ-ի ողջ սպառվող էներգիայի 20%-ը

ստանալ վերակնօվող էներգիայի աղբյուրներից: Թոմսենի գեկույցով կոչ էր արվում Եվրոպական Հանձնաժողովին մինչև տարվա վերջ ներկայացնել վերականգնվող էներգիայի աղբյուրներին վերաբերող օրենսդրական մի նախագիծ, որը պետք է սահմաներ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառման իրագործելի և պարտադիր նպատակներ այնպիսի ոլորտների համար, ինչպիսիք են էլեկտրաէներգետիկան, տրանսպորտը և շերմանատակարարումը:

Ըստ տիկին Թոմսենի, վերականգնվող էլեկտրաէներգիայի օգտագործման սահմանված նպատակին հասնելը ԵՄ համար հնարավորություն է, այլ ոչ թե բեռ, և դա կնպաստի ստեղծել առավել կանաչ և մրցունակ Եվրոպա:

“Առավել կանաչ էներգիան նոր աշխատատեղեր կստեղծի, ծնունդ կտա հետազոտությանը և նորամուծությանը և ակնհայտորեն կնպաստի էներգիայի պաշտպանության մեջացմանը և առավել քիչ CO2-ի արտանետմանը», ասել է տիկին Թոմսենը: Նա նաև նշել է, որ վերականգնվող էլեկտրաէներգիայի նպատակը չի կարող դիտվել առանձին այլ էներգետիկ քաղաքական նկրտումներից: Այն նպատակ ունի ստեղծել էլեկտրաէներգիայի իրական ներքին շուկա՝ ապահովելով 20% էներգիայի տնտեսման և ստուգման CO2-ի արտանետումների առևտրային նախագիծը:

Սարուժ-Վոլսկու գեկույցի հիմնական նպատակն է ի վերջո մշակել էներգետիկ ոլորտի գործուն Եվրոպական արտաքին քաղաքականություն: Նա նշել է, որ «գեկույցի հիմքում ընկած սկզբունքներն են. ոլիվերսիֆիկացիա՝ առաջնություն տալով ռազմավարական նախագծերին, ինչպես օրինակ Նաբուկո խողովաշարի նախագիծը, միասնություն՝ պաշտպանելու Միության շահերն ու համախմբվածություն՝ ճգնաժամային իրավիճակներում»: Այլ կերպ ասած. «Եվրոպան էներգետիկ միասնության կարիք ունի: Եթե երրորդ պետությունները օգտագործում են էներգիան իբրև արտաքին քաղաքականության գործիք, էներգիան այլևս ապրանք չէ»:

Զեկույցը մեծապես սատարում է Եվրոպայի միջով անցնող Կենտրոնական Ասիայից մինչև Հարավային Կովկաս ծգվող Էներգետիկ «միջանցքի» ստեղծման գաղափարը:

2006 թվականի հունվարին Ուլսաստանն ու Ուկրաինան սառնություն հաղորդեցին ԵՄ-ին

2006թ. հունվարին ռուս-ուկրաինական գազային վեճի հետևանքով ընդհատվեց ԵՄ որոշ երկրների նավթի և գազի մատակարարումը, և այն կարծես ահազանգ էր ԵՄ-ի արտաքին աղբյուրներից կախվածության մասին: Զեկույցը ոչ մի ջանք չի խնայում մատնանշելու համար, որ ԵՄ էներգիան մատակարարվում է «անկայուն» և «ավտորիտար վարչակարգ» ունեցող մի երկրից: ԵՄ-ին կոչ է արվում տնտեսական լծակներ կիրառել Ուլսաստանի վրա ճնշում գործադրելու համար՝ որպեսզի վերջինս ապահովի «բաց, արդար և բարենպահ» էներգետիկ շուկաներ: Զեկույցը կոչ էր անում ԵՄ-ն առավել սերտորեն փոխկապակցել իր արտաքին և էներգետիկ քաղաքականությունը: Ոմանք այն կարծիքին են, որ էներգիան պետք է մեկնաբանվի որպես ԵՄ անվտանգության «կարևոր տարր», և որը կիրախուսի ԵՄ արժեքների տարածումը՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի հանդեպ հարգանքի բնագավառներում: Բացի այդ, զեկույցում հղում էր արվել Կյոտոյի համաձայնագրի պահանջների համապատասխանությանը, ինչպես նաև կլիմայական փոփոխությունների դեմ պայքարի հարցերին:

Հունիսի 26-ը՝ կտտանքների դեմ պայքարի միջազգային օրը

Պայքար կտտանքների դեմ. ԵՄ հիմնական առաջնայնությունը



ԵՄ մարդու իրավունքների քաղաքականության հիմնական նպատակներից մեկը ԵՄ տարածքում և ամբողջ աշխարհում կտտանքների և նվաստացուցիչ վերաբերմունքի բոլոր ձևերի կանխումն ու

վերացումն է: Կտտանքների վերաբերյալ ԵՄ ուղեցույցը, որն ընդունվել է 2001թ., սահմանում է այս ոլորտում ԵՄ գործունեության հիմնական շրջանակները երրորդ պետությունների նկատմամբ, ինչպես նաև մարդու իրավունքների լայն համատեքստում: Ուղեցույցը նախատեսում է դիվանագիտության և համագործակցության բոլոր հնարավոր գործիքների օգտագործումը, ինչպիսիք են քաղաքական երկխոսությունը, դեմարշները և օժանդակություն ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական ծրագրին (ԺՄԻԵԾ) և այլն:

ԵՄ պարբերաբար առաջ է քաշում երրորդ երկրների հետ կտտանքների դեմ ուղղված քաղաքականության քննարկման հարցը: ԵՄ-ը ներկայումս իրականացնում է կտտանքների վերաբերյալ իր «Գլոբալ գործողությունների ծրագիրը», որն ընդգրկում է կտտանքների և նվաստացուցիչ վերաբերմունքի մեջ ներգրավված այլ երկրներին ուղղված դեմարշներ: Այդ դեմարշների ընթացքում բարձրացվող խնդիրները ներառում են կտտանքների դեմ Միացյալ Ազգերի կոնվենցիայի վավերացումը կամ կիրառումը, կտտանքների և կտտանքների հետ կապված հարցերով ՄԱԿ-ի հատուկ գեկուցողի այցերի մերժված պահանջները և առանձին երկրներին վերաբերող դեպքեր:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն կտտանքների կանխումը և կտտանքներից տուժածների վերականգնումը առաջնահերթ հարցերից է, որի լուծման համար ֆինանսավորում է նախատեսվում, ինչպիսին է, օրինակ, ԵՄ ներսում կտտանքներից տուժածների վերականգնողական կենտրոնների ֆինանսավորումը: Վերջին հինգ տարիների ընթացքում տարեկան միջինը 11.7 մլն եվրո է հատկացվել կտտանքների դեմ ուղղված նախագծերի ֆինանսավորման համար (22.6 մլն եվրո 2005-2006թթ.), այդպիսով դարձնելով **ԺՄԻԵԾ-ը** ամբողջ աշխարհում տուժածների վերականգնման և կտտանքների կանխման քաղաքացիական հասարակության նախագծերի ֆինանսավորման առաջատար աղբյուր:

ԺՄԻԵԾ ներկայումս աջակցություն է ցուցաբերում աշխարհի 41 երկրներում կտտանքներից տուժածների վերականգնողական

գործընթացներին, ինչը ներառում է աջակցություն կտտանքներից տուժածների վերականգնողական 20 կենտրոնների և կազմակերպությունների ԵՄ 16 անդամ երկրներում:

ԺՄԻԵԾ-ի 2007-2010թթ. ռազմավարության ժրագրում Հանձնաժողովն առաջարկում է հատկացնել 44 մլն եվրո հաջորդ 4 տարիների ընթացքում (տարեկան 11 մլն) կտտանքների դեմ պայքարի համար: Այս հատկացումների մի զգալի մասը, ինչպես նախկինում, կհատկացվի ԵՄ ներսում և ԵՄ դուրս գտնվող կտտանքներից տուժածների վերականգնողական կենտրոններին:

ԵՄ անդամ-երկրների պարտավորությունները

Կտտանքների և նվաստացուցիչ վերաբերմունքի բացարձակ արգելքն արտացոլված է ԵՄ Քիմնարար իրավունքների խարտիայի 4-րդ հոդվածում, որն ամրագրում է հետևյալը. «Ոչ ոք չի ենթարկվի կտտանքի կամ անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի», ինչպես նաև Եվրոպայի խորհրդի հիմնարար իրավունքների կոնվենցիայի 3-րդ հոդվածում, որն ունի ճիշտ նույն ծևակերպումը:

Որպես Եվրոպայի խորհրդի անդամ երկրներ, ԵՄ բոլոր անդամ երկրները վավերացրել են Կտտանքների կանխման Եվրոպական կոնվենցիան, որը նախատեսում է կտտանքների կանխման հարցերով Եվրոպական հանձնաժողովի (ԿԿՅ) կողմից այցեր կալանավայրեր: ԵՄ-ն ակտիվորեն աջակցում է այս ոլորտում Եվրոպական խորհրդի կողմից տարվող աշխատանքին՝ ի թիվս այլ միջոցների ապահովելով ԿԿՅ-ի մուտքը բոլոր կալանավայրեր և մշտապես հետևելով նրա հանձնարարականներին:

Եվրոպայի խորհրդի դիրեկտիվը, որով որոշվում են ապաստան փնտրողների ընդունման նվազագույն ստանդարտները (հոդված 20), օրենքով պարտադրում են անդամ երկրներին ապահովել կտտանքներից փրկվածների անհրաժեշտ բուժօգնության հնարավորությունը: Վերջերս ԵՄ ողջ տարածքով կատարված հետազոտության արդյունքում կտտանքներից տուժածների վերականգնողական միջազգային խորհուրդը (ԿՏՎՄԽ) եզրակացրել է, որ միայն անդամ երկրների փոքր մասն է հետևում իր պարտավորությունների կատարմանը՝ ազգային վերականգնողական կենտրոններին տրամադրելով

անհրաժեշտ ֆինանսներ և աջակցելով վերջիններիս զարգացմանը: ԿՏՎՄԽ-ն նաև հայտարարել է, որ անդամ երկրները ոչ բավարար չափով են ներդրումներ կատարում ՄԱԿ-ի Կտտանքներից տուժածների կամավորական ֆոնդին, որը հանդիսանում է ամբողջ աշխարհում կենտրոնների ֆինանսավորման 2-րդ հիմնական աղբյուրը ԺՄԵԾ-ից հետո:

ԵՄ-ում կտտանքներից տուժածները

Չնայած կտտանքների և ստորացուցիչ վերաբերմունքի բացարձակ արգելքին, որն ամրագրված է Իրավունքների միջազգային բիլում (Bill of Rights) և Կտտանքների դեմ ուղղված ՄԱԿ-ի կոնվենցիայում, կտտանքների և նվաստատուցիչ վերաբերմունքի այլ ձևերի կիրառումը մնում է լայնորեն տարածված: Համաձայն «Միջազգային համաներում» կազմակերպության, 2006թ. 102 երկրներում եղել են անվտանգության ուժերի, ոստիկանության և այլ պետական մարմինների կողմից կտտանքների և նվաստատուցիչ վերաբերմունքի դեպքեր: Ըստ ԿՏՎՄԽ-ի ԵՄ-ում կտտանքներից փրկվածների թիվը հասնում է մոտ 400.000, որոնց գերակշռող մեծամասնությունը փախստականներ են: ԿՏՎՄԽ-ն կարծում է, որ այս անհատներից միայն 16000 մարդ է ստացել բժշկական, հոգեբանական և հասարակական աջակցություն տարեկան կտրվածքով: Հաշվարկված է նաև, որ ԵՄ-ում ապաստան որոնողների մոտ 20%-ը այս կամ այն կերպ ենթարկվել են բռնության կամ կտտանքների:

Սոցիալական հարցեր և առողջապահություն

Ծանրաբեռնվածության թերևնացում



Մեջքի ցավը, պարանոցի և ուսերի ծանրությունը, ցավացող մկանները՝ այս ոսկրամկանային խախտումները բնորոշ են Եվրոպայում աշխատող մարդկանց մեծ մասին (25%-ը գանգատվում են մեջքի ցավից, և 23%-ը՝ մկանային ցավից)

Նման իրավիճակը հիմնականում ծանր ֆիզիկական աշխատանքի՝ մարմնի հաճախակի ճկվելու և լարվելու, ինչպես նաև սթրեսներով, տատանումներով և արագ ռիթմով աշխատանքի հետևանք են: Ոսկրամկանային խախտումները թանկ են նստում թե աշխատողների, թե գործատուների, և թե պետական մարմինների վրա: Դրա պատճառով ավելանում են աշխատանքից բացակայելու դեպքերը, և այս երևույթը, բնորոշ լինելով Եվրոպական յուրաքանչյուր երկրին շարունակում է նույն խնդիրները առաջացնել կամ, բնակչության ծերացման պայմաններում, նույնիսկ, ավելի խորանալ:

Այս խնդիրներին ի պատասխան, ԵՄ մշակել է «Ծանրաբեռնվածության թերևնացում» ծրագիրը, որի նպատակն է միասնական մոտեցում ցուցաբերել ոսկրամկանային խախտումների կանխման ուղղությամբ և հետևել, որ այն մարդիկ, ովքեր տառապում են այս հիվանդությամբ, շուտափույթ վերականգնվեն և վերադառնան իրենց աշխատանքին: Այս արշավն իր գագաթնակետին հասավ 2007թ. հոկտեմբերի 22-26-ը Եվրոպայում կայացած «Առողջությունը և անվտանգությունը աշխատանքի ընթացքում» միջոցառմանը, որի շրջանակներում մի շարք գործողություններ են կազմակերպվել ամբողջ

Եվրոպայով մեկ: Լավագույն աղյունքների համար մրցանակը կտրվի արշավի ավարտին՝ 2008թ-ի մարտին:

Հավասար աշխատավարձ համանման աշխատանքի համար

**ԵՄ առաջարկում է վերացնել տևական խտրականությունը
աշխատատեղերում**

Վերջին շրջանում անցկացրած հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ կանայք Եվրոպայում ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ՝ իսկ ավելի ճշգրիտ՝ 15 %-ով պակաս: Այս ցուցանիշը կայուն կերպով պահպանվում է դեռևս անցյալ տասնամյակից, չնայած աշխատող կանաց թիվը մեծացել է: 2000 թվականից ի վեր Եվրոպայում ստեղծվել են 8 միլիոն աշխատատեղ, որից 6 միլիոնը գրաղեցրել են կանայք: Եթե դրան ավելացնենք այն, որ համալսարանի շրջանավարտների 59%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են, ապա հարց է ծագում, թե ինչո՞ւ իրավիճակը չի փոխվում:



«Այս թերի իրավիճակը պետք է շտկվի», - հայտարարել է ԵՄ գրաղվածության հարցերով հանձնակատար Վլադիմիր Սպիդլան՝ նշելով, որ ԵՄ պետք է վերացնի սեռական խտրականությունը: Նա նաև նշել է, որ պատճառները բազմաթիվ են՝ հաճախ քողարկված: Կանայք ավելի շատ նախընտրում են կատարել անվճար կամ կես-դրույքով աշխատանք, և բացի այդ կանաց համար նախատեսված աշխատատեղերը սովորաբար ավելի քիչ են վարձատրվում:

Այն հմտությունները, որոնք վերագրում են հիմնականում կանաց, համարվում են ավելի քիչ վարձատրվող: Այսպես օրինակ, դայակներն ավելի քիչ են վաստակում, քան մեխանիկները, բուժքույրերն ավելի քիչ՝ քան ոստիկանանները:

Առավել արդյունավետ քաղաքականություն իրականացնելու նպատակով, ԵՄ հավատացած է, որ բոլոր կողմերը պետք է ակտիվորեն ներգրավվեն գործընթացի մեջ: Բացի այդ, այս խնդիրը 21-րդ դար չտեղափոխելու նպատակով պետք է առավել վճառականություն ցուցաբերել խնդրի լուծման հարցում:

Տարեց բնակչության խնդրի լուծումը. Եվրոպական “կապույտ քարտ”



Եվրոպան բախվել է ժողովրդագրական ճգնաժամի: Որոշ կանխատեսումների համաձայն, մինչև 2050 թվականը երկու աշխատող պետք է աջակցի մեկ թոշակառուի՝ համեմատած ներկայիս 4 աշխատողին 1 թոշակառու հարաբերակցության հետ: Կարող է արդյո՞ք ներգաղթը հարցի լուծում հանդիսանալ: Առաջարկվող լուծումներից մեկը «Եվրոպական կապույտ քարտ» համակարգի ներմուծումն է՝ ԱՄՆ-ի կանաչ քարտերի տարրերակով՝ հատուկ երրորդ երկրների բարձրորակ մասնագետների համար:

ԵՄ հանձնաժողովի փոխնախագահ Ֆրանկո Ֆրաթինիի կարծիքով ԵՄ-ը պետք է կարողանա մրցակցել ԱՄՆ-ի հետ, որը գրավում է աշխարհում ամենահմուտ աշխատուժը: Ուստի նա առաջարկում է «կապույտ քարտը»՝ հատուկ բնակության իրավունք երրորդ երկրների բարձրորակ աշխատողների համար, որոնց նկատմամբ աշխատատեղերում կերաշխավորվի հավասար վերաբերմունք: Դա հնարավորություն կտա նրանց ապրելու և աշխատելու ԵՄ տվյալ երկրում՝ նախնական և երկարացնելու հնարավորություն ընձեռող երկու տարի ժամկետով, որից հետո նրանք կարող են աշխատել ԵՄ որևէ այլ երկրում: «Մենք պետք ենք ներգաղթին վերաբերվենք իբրև բարգավաճման միջոց և որպես այսօրվա աշխարհի անխուսափելի երևույթ և ոչ իբրև սպառնալիք», ասել է Ֆրանկո Ֆրաթինին:

Ամենաորակյալ մասնագետներն ուղևորվում են ԱՄՆ

ԵՄ-ն նպատակ ունի կանխել եվրոպական աննշմարելի ժողովրդագրական ճգնաժամը՝ գրավելով լրացուցիչ 20 միլիոն որակյալ աշխատողներ արտասահմանից: Ֆրաքինին նշում է, որ խնդիրը հատուկ մասնագիտությունների ոլորտում պահանջվող աշխատողներ գրավելն է՝ առկա բացերը լրացնելու նպատակով: Ըստ նրա՝ ցածր որակավորում ունեցող աշխատուժի 85%-ը գնում է ԵՄ և 5%-ը՝ ԱՄՆ, մինչդեռ որակյալ աշխատուժի 55%-ը գնում է ԱՄՆ և միայն 5%-ը՝ ԵՄ:

Իտալիայի և Իսպանիայի սոցիալիստական կուսակցության անդամներ՝ Լիլի Գրաբերը և Խավիեր Մորենո Սանչեսը օրինական և ազօրինի ներգաղթի հարցերով պալատին ներկայացրել են համապատասխան գեկույցներ:

Տիկին Գրաբերը, մասնավորապես նշել է, որ հատուկ հմտությունների տիրապետող մասնագետների նկատմամբ իրական պահանջ կա, որն, իհարկե, տարբեր է ըստ պետությունների: Դետևապես «արդարացի է բացել մեր դոները»: Այնուամենայնիվ, նա նշել է նաև, որ պետք է աշխատանք տարվի այն ուղղությամբ, որ աշխատուժի դոնոր երկրներում բարձրորակ աշխատուժը ամբողջովին չարտահոսի կամ այդ արտահոսքի դիմաց այդ երկրները ոչինչ չստանան: «Ազօրինի ներգաղթի դեմ պայքարելու համար, չհաշված քրեածին երևույթը, մեզ անհրաժեշտ է ոչ միայն բացել և սահմանել օրինական ճանապարհները ԵՄ մուտք գործելու համար, այլ նաև ուժեղացնել մեր ջանքերը խթանելու այդ պետությունների աճող ժողովրդավարությունը և տնտեսությունը»:

Պարոն Մորենո Սանչեսը աջակցում է իրավական ձևերով ԵՄ ներգաղթի օրինական ուղիներին նպաստող, ինչպես նաև գաղտնի ներգաղթը կանխելու և մարդկանց ապօրինի վաճառքի դեմ ուղղված միջոցառումները:

Բաց դռներ քարձրորակ մասնագետների համար



Եվրոպայի ծերացող բնակչության պայմաններում ներգաղթը կարող է խթան հանդիսանալ նվազող աշխատուժի խնդրի լուծման հարցում:

Դանձնաժողովի կողմից արված նոր առաջարկի համաձայն «կապույտ քարտը» Եվրոպայում օդինական աշխատողներին առավել հստակ իրավունքներ է սահմանում և հնարավորություն տալիս բարձր մասնագիտական որակավորում ունեցող ներգաղթողներին առանց ավելորդ քաշքշուկների բնակություն հաստատել և աշխատել Եվրոպայում: Ծերացող բնակչության աճող տեմպերի հետևանքով, Եվրոպան կարող է շուտով բախվել լուրջ խնդրի՝ կապված որակյալ աշխատողների պակասի հետ: ԵՄ-ում տնտեսական աճը պահպանելու համար Եվրոպան յուրօրինակ մագնիսի դեր պետք է ստանձնի բարձր որակավորում ունեցող աշխատողներին գրավելու գործում. մինչդեռ շատ բարձրորակ մասնագետներ այժմ գերադասում են ԱՄՆ, Կանադա կամ Ավստրալիա: Այսպիսով, Եվրոպական «կապույտ քարտը» հնարավորություն է տալիս օդինական ներգաղթողներին բնակություն հաստատել և աշխատել՝ նրանց օժտելով մի շարք սոցիալ-տնտեսական իրավունքներով, հատկապես ընտանիքի վերամիավորման իրավունքով: ԵՄ յուրաքանչյուր անդամ երկիր ինքն է սահմանելու, թե որքան գաղթական-աշխատող այն կարող է ընդունել: Զարգացող երկրների համար վտանգավոր «Ուղեղների արտահոսքից» խուսափելու համար, Դանձնաժողովը առաջարկում է սահմանափակել կամ արգելել աշխատանքի ընդունման ակտիվ մեխանիզմների կիրառումը այդ երկրներում: Մեկ պատուհանի ընթացակարգը կգործի բոլոր պոտենցիալ

աշխատողների համար, որոնք այժմ պետք է անցնեն ամենատարբեր ընթացակարգերով: Դրանից բացի, հանձնաժողովի անդամները գտնում են, որ ներգաղթողները պետք է ունենան ԵՄ քաղաքացիների միևնույն իրավունքները՝ աշխատանքային պայմաններ, աշխատավարձ, կրթություն, սոցիալական ապահովություն և այլն: Այս ամենը կնպաստի ներգաղթողներին ավելի արագ ինտեգրվել և կօգնի Եվրոպայի գործարարներին խուսափել էժան աշխատուժի վրա հիմնված անազնիվ մրցակցությունից:

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԵՄ անդամները մտադիր են դպրոցականների համար ավելացնել կաթի և մրգի քանակությունը



Եվրոպական Խորհրդարանի գյուղատնտեսական հանձնաժողովը կոչ արեց սահմանել դպրոցներում միասնական կաթի օգտագործման համակարգ: Հանձնաժողովի անդամները ցանկանում են հստակ որոշել օգնության ավելացող չափերը, քանի որ հավատացած են, որ դպրոցներում կաթի օգտագործումը կնպաստի երեխաների մարսողության բարելավմանը: Հանձնաժողովի գեկույցում փորձագետները կոչ են անում ծրագրի դեկավար մարմնին՝ Հանձնաժողովին, որպես ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության մի

մաս քննարկել դպրոցներում կաթից բացի նաև միրզ և այլ սննդամթերքի ներմուծման հարցը:

Քննարկման ընթացքում նշվել է, որ պետք է հաշվի առնել երեխաների գիրության միտումները ու ներկայումս կիրառվող սխալ սննդակարգը:

Կաթը համար առաջին սննդամբերքն է մարդու և կենդանիների համար: Անցնելով տարբեր մշակույթների միջով, այն խորհրդանշում է կյանք, պտղաբերություն ու առողջություն: Կլեոպատրան հայտնի էր իր կաթի լոգանքներով: ԵՄ-ի այս հիմնական սննդամբերքի արտադրությունը կարգավորվում է Գյուղատնտեսական ընդհանուր քաղաքականությամբ: Նման կարգավորումը պետք է ընթանա համաքայլ արտադրության և սպառման տենդենցի հետ: Երեքշաբթի օրը ԵԽ-ն քննարկեց գերմանացի քրիստոնյածողովորավար Էլիզաբեթ Զեգլի կողմից առաջ քաշված 3 գեկույցներ՝ կապված կաթի արտադրության ոլորտում բարեփոխման և Եվրոպական կաթի շուկայի հետ:

Եվրոպայում կաթը շատ ընդունված է: Միջին Եվրոպացին օրը սկսում է մի ափսե շիլայով և կաթով, օրվա ընթացքում մի յոգուրտ է ուտում, պանիր ընթրիքից հետո և մի բաժակ տաք կաթ՝ քնելուց առաջ: Եվրոպական կաթնամբերքի արտադրությունը ամեն տարի մշակնան է ենթարկում գրեթե 135 մլն տոնա հում կաթ՝ մի շարք մբերքների ստացման համար՝ պանիր, կարագ և կաթնամբերքի այլ տեսակներ: Եվրոպական կաթի մոտ 40%-ը սպառվում է պանրի տեսքով: Կաթի արտադրությունը ԵՄ-ի 25 անդամ պետությունների 1,6 մլն ազարակատերերի ապրուստի միջոցն է:

1984թ-ից սկսած Եվրոպայի ազարակատերերը ենթարկվել են կաթի արտադրության սահմանաչափերի, որոնք սահմանափակում են արտադրության ծավալները ԵՄ յուրաքանչյուր պետությունում:

Զեգլի գեկույցները հիմնված են ԵՅ-ի առաջարկների վրա, որոնք նպատակ ունեն պարզեցնելու Եվրոպական կաթի շուկան՝ թույլատրելով կաթի արտաքին արտադրությունը բաժանել 3 տարբեր խնբերի՝ գտած, կիսազտված և լրիվ յուղայնությամբ: Նա առաջարկում է նաև ընդհանուր չափորոշիչներ սահմանել՝ ԵՄ-ում արտադրվող կաթի սպիտակուցների պարունակության հարցում:

Սա հանձնաժողովի «կաթնային վերակառուցման» ծրագրի մի մասն է, որը նպատակ ունի օգնելու Եվրոպացի արտադրողին դիմակայելու աճող «արտասահմանյան» մրցակցությանը, կատարելագործելու արտադրության

միջոցները, ընդայնելու սննդամթերքի վերաբերյալ տեղեկատվության մակարդակը և պարզեցնելու կարի բաշխման սխեման :

Այսպիսով, այսպես կոչված, Եվրոպական կարի շուկայի «փոքր բարեփոխումը» ակնկալում է հանգեցնել գրեթե 120 մլն խնայողությունների 2008-2013թթ. ընկած ժամանակահատվածի համար:

ՍՆԾԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՀՍՆԱՄՅԱ ԻՆՔԵԼՅԱՆԸ

ՍՆԾԻ անվտանգության ոլորտը ԵՄ քաղաքականության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում և միակն է, որտեղ տարիներ ի վեր նվաճումներ են գրանցվել: ԵՄ-ում սննդի անվտանգության իհսնամյա ինքելյանը նշելու համար Եվրոպական հանձնաժողովը իրատարակել է գումազարդ մի գիրք, որը ներկայացնում է տասնամյակների ընթացքում այդ ոլորտում գրանցած փոփոխությունները, մարտահրավերները, հաջողություններն ու ձեռքբերումները: Գրքում գետեղված է Եվրոպական հանձնաժողովի առողջապահության հարցերով հանձնակատար Մարկոս Կուպրիանովի ուղերձը, որը, կարծում ենք, հետաքրքիր է մեր ընթերցողին: Ուղերձում մասնավորապես նշված է հետևյալը:



«Եվրոպական ապրելակերպն այսօր խիստ տարբերվում է կես դար առաջվա ապրելակերպից, և բնականաբար փոխվել են նաև սննդի սպառման նկատմամբ նոտեցումները: Անցել են նորմավորված, սահմանափակ պահպանման ժամկետով տեղական արտադրանքի և աշխատատար արտադրության ժամանակները: Այսօր, երբ խոսքը վերաբերում է սննդին, ԵՄ քաղաքացիները սովոր են ընտրության, հարմարավետության, որակի և մրցունակ գների: Մարդիկ առավել քան երբեմ արժենորում են մթերքը ֆերմայից գործարանի միջոցով մինչև սեղան հասցնելու բարդ գործընթացները: Բարձրացել է նաև սննդի անվտանգության վերաբերյալ մարդկանց իրազեկվածության մակարդակը և նրանք հասկանում են, որ նման ռիսկեր

կարող են առաջանալ արտադրության շղթայի ցանկացած հատվածում, եթե համապատասխան միջոցառումներ չկիրառվեն: Յետևաբար եվրոպական սպառողները նախ և առաջ ակնկալուն են, որ պատշաճ միջոցներ կկիրառվեն՝ հավաստիանալու համար, որ ԵՄ վաճառվող սնունդն անվտանգ է:

Սպառողների վարքագիր և պահանջների փոփոխություններին զուգահեռ, անցյալ դարի երկրորդ կեսը ականատես է եղել սննդի արտադրության, վերամշակման և վաճառքի բնագավառում ունեցած հեղափոխությանը: Այսօր գործող սննդի արտադրության շղթայական համակարգը գրեթե անճանաչելի է՝ համեմատած 1950-ականների: Ֆերմերային տնտեսության և սննդի արդյունաբերության մեջ կիրառվող նոր տեխնոլոգիաները պահանջում են նոր մոտեցումներ: Յուրաքանչյուր տասնամյակ գիտությունն և տեխնոլոգիան առաջ են տարել գյուղատնտեսությունն ու սննդի արդյունաբերությունը, մինչդեռ գլոբալիզացիան առաջ է բերել նոր արտադրանքներ, նոր մրցակցություն և նոր մարտահրավերներ:

ԵՄ-ը սննդի անվտանգության իր քաղաքականությունը զարգացրել և մշակել է հիմնվելով այդ փոփոխությունների վրա: Նոր տեխնոլոգիաները գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության մեջ պահանջում են կարգավորման նոր մոտեցումներ: Նոր մարտահրավերի կամ սպառնալիքի ի հայտ գալու դեպքում, արդյունավետ և համարժեք արձագանքներ պետք է մշակվեն: Արդյունքում ստեղծվել է օրենսդրական մարմին և համապատասխան օրենսդրություն, որն ընդգրկում է կենդանական և մարդկային սննդի ողջ շուկայի ցանցերը, այսպես կոչված՝ «ֆերմայից մինչև պատառաքաղ»:

Մրգի և բանջարեղենի ֆերմերների հարցը վերջին ԵՄ գյուղատնտեսական բարեփոխման ծրագրի մեջ

ԵՄ-ը մի քայլով մոտեցել է ժամանակակից, սպառողական կողմնորոշում ունեցող գյուղատնտեսական քաղաքականությանը, որը բարեփոխում է մրգի և բանջարեղենի շուկան: «Մենք պետք ենք համապատասխանեցնենք մրգի և

բանջարեղենի ոլորտների բարեփոխումները այլ ոլորտներում տեղի ունեցող բարեփոխումների հետ», նշել է ԵՄ գյուղատնտեսության հարցերով հանձնակատար Մերիեն Ֆիշեր Բոյելը՝ ԵՄ 2003թ-ի ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության վերանայման մասին (ԸԳՔ) իր հնչեցրած գնահատականում: Յունիսի 12-ին ընդունված բանջարեղենի և մրգի արտադրությանը վերաբերող այդ նոր փաթեթը նպատակ ունի համապատասխանեցնել այդ շուկան մինչ այդ բարեփոխված գյուղատնտեսական մյուս ոլորտների հետ:

Սկսած 2008թ-ից, ԵՄ սուբսիդիաների ծավալներն այդ ոլորտում այլևս կապված չեն լինելու արտադրական ծավալների հետ: Փոխարենը, յուրաքանչյուր ֆերմա կստանա միասնական հատուցում շրջակա միջավայրի, սննդի անվտանգության և հողի կառավարման որոշակի չափորոշչներին համապատասխանելու համար: Իսկ արտադրող ձեռնարկություններին կտրվեն առավել շատ գումարներ և այլ տիպի աջակցություն՝ վերջիններիս օժանդակելու սեզոնային ճգնաժամերի ժամանակ, ինչպես նաև խրախուսելով բոլորին ավելի շատ միրգ ու բանջարեղեն օգտագործել:



2003 թվականի ԸԳՔ բարեփոխման նպատակն էր եվրոպական գյուղատնտեսությունը ավելի մրցունակ և ինքնապահովված դարձնելը՝ երաշխավորելով գյուղատնտեսներին արդարացված եկամուտներ, և շուկաներին և սպառողների կարիքներին համապատասխան արտադրանք տալու հնարավորություն: ԵՄ աջակցում է նաև գյուղատնտեսական այլ մթերքների արտադրությանը, օրինակ բանանի աճեցմանը, որը կարգավորվում է առանձին սխեմայով, և գինու արտադրությանը: Այսպես օրինակ բանան արտադրողները կանարյան կղզիներում, Գվադելուպայում, Մարտինիքվեում, Ազորներում և Մադեյրայում նույնպես ստանում են կանխիկ գումար՝ որպես հատուկ սուբսիդիաների մի մաս նախատեսված ԵՄ-ից դուրս գտնվող տարածքների համար:

Այսօր գյուղատնտեսության և շրջակա միջավայրի զարգացման համար տրվող ԵՄ-ն նպաստները կազմում են գրեթե 50 միլիարդ եվրո, ինչը կազմում է հենց այդ ոլորտի ամբողջական գումարային ծախսերի կեսը: Միևնույն ժամանակ, ԵՄ բնակչության ճնշող մեծամասնությունը (ըստ հետազոտման վերջին տվյալների՝ 58%-ը) կարծում է, որ այս համամասնությունը համապատասխանում է իրական պահանջներին:

Դանձնաժողովն առաջարկում է ստեղծել գլոբալ միություն կլիմայական փոփոխություններից առավել տուժած զարգացող երկրներին օգնելու համար

Եվրահանձնաժողովն առաջարկում է ստեղծել կլիմայական փոփոխությունների հարցերով նոր միություն ԵՄ և այն աղքատ զարգացող երկրների միջև, որոնք առավել շատ են տուժել կլիմայական փոփոխություններից և որոնք ամենաքիչ



հնարավորություններն ունեն դրա դեմ պայքարելու գործում: Գլոբալ կլիմայական փոփոխությունների միության (ԳԿՓՄ) միջոցով ԵՄ-ն և այս երկրները միասին փորձելու են ներառել կլիմայի փոփոխությունների խնդիրն աղքատության նվազեցման ռազմավարության մեջ: ԵՄ-ն

պատրաստ է հատկացնել նշանակալի նյութական միջոցներ այս երկրների կլիմայական փոփոխություններին առնչվող ծրագրերի համար: Միջոցառումները ենթադրում են առավել կատարելագործված պատրաստվածություն բնական աղետներին դիմակայելու համար, որոնք գլոբալ տաքացման հետևանքով, ինչպես սպասվում է, ավելի հաճախակի և ինտենսիվ են դառնալու: ԳԿՓՄ-ն վերահաստատում է ԵՄ կլիմայական փոփոխության և զարացման վերաբերյալ գործողությունների ծրագրի նկատմամբ ստանձնած իր պարտավորությունը՝ որի համաձայն կլիմայական փոփոխության հետ կապված հարցերը պետք է կազմն զարգացման համագործակցության ծրագրի ամբաժան մաս:

«Կլիմայական փոփոխությունների արդյունքում ամենաուժեղ հարվածը կհասցվի զարգացող երկրներին, ուստիև նրանք մեր օգնության կարիքն ունեն կլիմայական փոփոխությունների ազդեցությունը մեղմացնելու և արդեն իսկ ընթացող փոփոխություններին հարմարվելու գործում: Նոր տեխնոլոգիաները զարգացման ու կյանքի որակին չխոչընդոտող կայուն հասարակություն կառուցելու ձևերից միայն մեկն է»: Սա է այն ուղերձը, որը ներկայացվել է Եվրոպական հանձնաժողովի Զարգացման և մարդասիրական օգնության հարցերով հանձնակատար Լուիս Միշելի կողմից՝ շրջակա միջավայրի հարցերով հանձնակատար Ստավրոս Պիմասի և ԵՄ արտաքին հարաբերությունների հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդեմերի աջակցությամբ և նպատակ ունի ապահովել գործողությունների ավելի լայն շրջանակ՝ ինչպես երկխոսությունների և փոխանակման, այնպես էլ ԵՄ և զարգացող երկրների միջև գործնական համագործակցության միջոցով:

Ըստ կլիմայական փոփոխությունների հարցերով միջկառավարական հանձնաժողովի (IPCC) կանխատեսումների, աշխարհի մեծ մասը՝ հատկապես զարգացող երկրները, գնալով ավելի շատ են ենթարկվելու կլիմայական փոփոխությունների ազդեցությանը: Աղքատ զարգացող երկրներին և, մասնավորապես, առավել քիչ զարգացած երկրներին և զարգացող փոքր կղզի-պետություններին կհասցվի ամենաարագ և ուժեղ հարվածը:

ԵՄ-ն առաջնային դեր ունի կլիմայական փոփոխությունների դեմ պայքարի միջազգային գործողություններին նպաստելու հարցում: 2007-ի Եվրոպական խորհրդարանի գարնանային նստաշրջանը հստակ առաջարկել ներկայացրեց 2012թ.-ից հետո միջազգային կլիմայական փոփոխությունների պայմանագրի հետ կապված և պարտավորվեց նշանակալիորեն կրծատել ԵՄ-ի ջերմոցային գազի արտանետումները: Գլոբալ կլիմայական փոփոխությունների միությունը կարևոր հենք կհանդիսանա կլիմայական փոփոխությունների շուրջ ԵՄ-ի՝ այն պետություններին ուղղված արտաքին գործողությունների հարցում, որոնք ունենալով ամենաքիչ պատասխանատվությունը գլոբալ տաքացման համար, ամենաշատն են տուժում դրանից:

ԳԿՓՄ-ի կողմից տրամադրվող աջակցությունը պետք է կենտրոնանա 5 ոլորտների վրա՝ ապահովել համապատասխանեցման հստակ միջոցառումներ, նվազեցնել անտառահատման արդյունքում առաջացած օդի աղտոտվածությունը, օգնել աղքատ երկրներին օգտվել կարբոնի համաշխարհային շուկայից, աջակցել աղքատ երկրներին ավելի լավ նախապատրաստվել բնական աղետներին դիմակայելուն և ներառել կլիմայական փոփոխությունների խնդիրը զարգացման համագործակցության և աղքատության նվազեցման ռազմավարության մեջ։ Քանի որ կլիմայի փոփոխությունը ազդում է շատ ոլորտների վրա, այն պետք է ներառվի աղքատության նվազեցմանն ուղղված միջոցառումների ցանկի մեջ՝ կայունություն ապահովելու նպատակով։ Կլիմայական ռիսկերի կանոնավոր գնահատումը և կլիմայի փոփոխությունների ընդգրկումը զարգացման ռազմավարության և ծրագրերի մեջ այս առումով պարտադիր բնույթ ունի։

Հանձնաժողովը ԳԿՓՄ-ի համար արդեն հատկացրել է 50 միլիոն Եվրո 2008-2010թթ. համար։ Սակայն պահանջներն ինչպես հարկն է բավարարելու համար անհրաժեշտ են զգալիորեն ավելի շատ միջոցներ։ Այդ պատճառով ԵՄ անդամ երկրներին կոչ է արվել համաձայնեցված պարտավորությունների մի մասն ուղել պաշտոնապես զարգացման օժանդակության ծավալների ավելացմանը՝ առավել խոցելի երկրներում կլիմայական փոփոխությունների դեմ պայքարի նպատակով։

Վերջին տարիներին կլիմայի փոփոխության և ծայրահեղ վատ եղանակի հաճախության ու ինտենսիվության միջև կապը բավականին հստակ է դարձել։ Վերջին 20 տարիների ամենամահացու աղետներից 7-ը տեղի են ունեցել 2000-2006թթ.։ Միայն սկսած 2007թ. հուլիսից Եվրահանձնաժողովը 24.5 մլն Եվրո է հատկացրել Կոլումբիայի, Կարիբյան ավազանի, Պերուի, Քենիայի, Ջնդկաստանի, Բանգլադեշի, Նեպալի, Ջյուսիսային Կորեայի և Սուլանի բնական աղետներից տուժածներին։ ԳԿՓՄ-ն մտադիր է աջակցել առավել խոցելի երկրներին բնական աղետների կանխարգելման և դրանց դիմակայելու նախապատրաստման գործում։

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀԻՌԱՐԱՆԻ ԲՆԱՊԱհՊԱՆՈՒԹՅԱՆ ԻԱՐԾԵՐՈՎ
զԲԱՂՎՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՍԱՏԱՐՈՒՄ ԵՆ ԱՎՏՈՄԵքԵՆԱՆԵՐԻց
ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ԱԾԽԱԲՔՈՒ ԳԱԳԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՍԱՀՄԱՆԱՎԻԱԿՈՒՄՆԵՐԻ
ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ**

Ինչպես վկայում է փորձը, ԵՎՐՈՊԱՅՈՒՄ մեծ չէ վարորդների թիվը, ովքեր կամավոր կերպով սահմանավակում են ածխաբքու գագի արտանետումները.

այդ պատճառով պետք է սահմանվեն պարտադիր սահմանավակումներ:

Այսպիսի ուղերձով են հանդես եկել

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀԻՌԱՐԱՆԻ
ԲՆԱՊԱհՊԱՆՈՒԹՅԱՆ ԻԱՐԾԵՐՈՎ**

հանձնաժողովի անդամները

արտանետումների վերաբերյալ վերջին

գեկույցներից մեկում: Սկսած 2009

թվականից նրանք մտադիր են

սահմանավակումներ մտցնել



ավտոմեքենաների համար և մինչև 2012թ. նպատակ ունեն սահմանել

արտանետումների մակարդակը 1 կիլոմետրի համար մինչև 120գր. ածխաբքու

գագ: Դամաձայն ներկա կամավոր օրենքի, ավտոարտադրողներն մինչև 2008

թվականը իրենց համար սահմանել են 140 գրամ ածխաբքու գագի

սահմանավակումը: Այնուամենայնիվ գեկույցը ցույց է տալիս, որ այդ

նպատակին հնարավոր չի լինի հասնել:

Այսօր ԵՎՐՈՊԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ վրա ավելի քան 216 մլն. մեքենա կա և խնդիրն այն է, որ դրանք աղտոտում և փշացնում են շրջակա միջավայրը: Որպես ածխաբքու գագ արտանետող՝ դրանք նպաստում են գլոբալ տաքացմանը՝ քանի որ գագը բարձրանալով վերև նբնոլորտում պահում է արևից եկող

շերմությունը: Մեկ այլ խնդիր է ավտոմեքենաների քանակը: 2007թ. հուլիսին Ընդհանուր առմամբ ավտոմեքենաների քանակը Եվրոպական ճանապարհներին 1990-2004թթ. ընթացքում աճել է 40%-ով, իսկ ածխաթթու գազի արտանետումը աճել է 3 անգամ:



Աղյուֆ միայն ավտոմեքենաներ արտադրողներն են պատասխանատվություն կրում

Զեկույցը մշակել է Մեծ Բրիտանիայի ազատական կուսակցության անդամ Քրիս Դեյվիսը, որը գտնում է, որ «յուրաքանչյուր օրենսդրություն պետք է համապատասխանեցվի Եվրոպական ստանդարտներին, որոնք ել պետք է հաշվի առնեն արտադրողների պահանջները»: Նրա հավաստմամբ, Վերջերս Ֆրանկֆուրտում տեղի ունեցած ավտոմեքենաների ցուցահանդեսին ներկայացվել են արդեն գոյություն ունեցող «ածխաթթու գազի արտանետումը կրճատող տեխնիկա»: Նրա գեկույցը մշակվել էր ի պատասխան Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունվող «ռազմավարական փաստաթղթի», որը պետք է նախորդի այս տարեվերջին կամ մյուս տարեսկզբին ընդունվելիք օրենսդրությանը: Ներկայումս այն տարածվում է փոխադրամիջոցների 3.5 տոննայից ցածր մեքենաների վրա: Եվրոպական խորհրդարանի քնապահանության հարցերով հանձնաժողովի անդամները իրենց աջակցությունն են տվել սեպտեմբերի 12-ի նրա առաջարկին: Խորհրդարանը քննարկել է գեկույցը նոյեմբերի լիազումար նիստում:

Այնուամենայնիվ, որոշ մարդիկ հավատում են, որ այդ հարցում պետք չէ մեղադրել միայն ավտո արտադրողներին: Մեծ Բրիտանիայի պահպանողական կուսակցության անդամ Մարտին Քոլանան արտահայտել է իր ցանկությունը համախմբել ջանքերը՝ վարելիք մատակարարողներից և սպառողներից մինչև կառավարության նախաձեռնությունները: Նա նաև հավատում է, որ պետք է

աշխատանք տանել վարորդների հետ՝ ավտոմեքենա վարելու իրենց որոշ սովորությունները փոխելու առումով:

Ածխաթու գաղի փոքր կրծատումը նշանակում է մեծ խնայողություններ

Արդյո՞ք շատ մեծ տարբերություն կա մեկ կիլոմետրի համար 130գր և 120գր սահմանափակումների միջև։ Բնապահպանության հանձնաժողովի փոխնախագահ Սարի Դաասի համար պատասխանը միանշանակ «այո է»։ «Ամեն տարի 16 մլն. նոր ուղևորատար ավտոմեքենաներ են արտադրվում Եվրոպայում։ Եթե մեկ տարում մեկ ավտոմեքենան անցնում է միջինը 20 000 կմ., ապա փոքր տարբերությունը՝ 10 գրամ նշանակում է 3.2 մլն. տոննա ածխաթու գագ մեկ տարում»։ Ըստ Եվրոպական խորհրդարանի Ֆինլանդիայի Կանաչների կուսակցության անդամի, բնապահպանության հանձնաժողովի դիրքորոշումը պաշտպանել 120գ/կմ սխեման 130գ/կմ։ Փոխարեն, նաև նշանակում է, որ մենք ցանկանում ենք ընդգծել վառելիքի այլ ոչ թե կենսաբանական վառելիքների, օգտակարությունը, ուղևորատար մեքենաների արտանետումները կրծատելու գործում»։

Երիտասարդություն և մշակույթ

ԵՄ ներդրումներ է իրականացնում երիտասարդության բնագավառում



Այսօր Եվրոպայում երիտասարդների համար բավարար աշխատատեղեր ստեղծված չեն, սակայն միևնույն ժամանակ նկատվում է աշխատուժի պակաս եղած աշխատատեղերը լրացնելու համար։ ԵՄ-ը կոչ է անում պայքարել այդ պարադոքսալ իրավիճակի դեմ, պնդելով, որ յուրաքանչյուր ոք պետք է իր տեղն ունենա հասարակության մեջ։

Ոլորտի վիճակագրական պատկերը շատ տխուր է՝ 25-29 տարիքային խմբի յուրաքանչյուր 10 երիտասարդից ավելի քան 1-ը գործազուրկ է՝ Դանիայում, Իրլանդիայում, Նիդերլանդներում 10%, Ֆինլանդիայում և Ալովակիայում 25%: Յուրաքանչյուր 6 եվրոպացի երիտասարդներից մեկը վաղ տարիքում լքում է դպրոցը, իսկ առանց համապատասխան որակավորում ունենալու աշխատանք գտնելը դժվար է: Ընդհանուր առմամբ, ԵՄ-ում 2006 թվականի դրությամբ 15-29 տարեկան երիտասարդները կազմել են գործազուրկների ամբողջ թվի 40%-ը:

ԵՄ-ն խնդրի լուծման ուղղությամբ ներկայացրել է որոշ հանձնարարականներ, որոնց հիմնական շեշտը երիտասարդության խնդիրներին ուղղված ներդրումներն են՝ որպես առանցքային մի ոլորտ իրավիճակը ետ շրջելու համար: ԵՄ-ն կոչ է անում ընտանիքներին, ուսուցիչներին և գործատուներին համատեղել իրենց ջանքերը դպրոցը լքող աշակերտների թիվը կրճատելու ուղղությամբ, ընդլայնելու վերջիններիս աշխատանքի ընդունվելու հեռանկարները և ամրապնդելու բիզնեսի և կրթության միջև կապը:

2000 թվականին նախանշած նպատակները մինչև 2010թ. Եվրոպայում երիտասարդների գործազրկությունը կրճատել 10%-ով հեռու է իրականություն դառնալուց: ԵՄ-ը լուրջ մարտահրավեր է նետել անդամ պետություններին և ընկերություններին՝ կոչ անելով նրանց միահամուռ ջանքերով լուծել խնդիրը:

ԵՄ մշակույթը գլոբալիզացիային ընդառաջ

ԵՄ հանդիսավոր կերպով մեկնարկել է առաջին մշակութային ռազմավարության իրականացումը, որում համախմբած են զարգացմանը, միջմշակութային միասնությանը և արտաքին հարաբերություններին առնչվող խնդիրները:



Ազգային բազմազանության խրախուսումը, մշակույթը որպես զարգացման գործոն ներկայացնելը և դրա ներառումը ԵՄ-ի և աշխարհի միջև հարաբերությունների համատեքստի մեջ։ Ահա սրանք են ԵՄ նոր «Եվրոպական մշակութային օրակարգի» նպատակները։

Հաստատվելով 2006թ. կառավարությունների և մշակութային մարմինների կողմից անցկացրած լայն հասարակական քննարկումների արդյունքները, այս ռազմավարությունը պաշտոնապես մտել է շրջանառության մեջ 2007 թ. հոկտեմբերին։

Միանալով մշակութային երկխոսությանը նվիրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիային, ԵՄ-ն պարտավորվել է խրախուսել բազմազանությունն ու երկխոսությունը տարբեր ժողովուրդների միջև, ինչպես իր սահմանների ներսում, այնպես էլ սահմաններից դուրս։

Համաձայն որդեգրած նոր ռազմավարությանը, ԵՄ-ը մտադիր է ներառել մշակույթը գործընկեր երկրների հետ իր հարաբերությունների գործող օրակարգում, ինչպես նաև տարբեր զարգացման ծրագրերում։ Օրինակ, այն առաջարկում է ստեղծել մշակութային 30 միլիոն եվրոի չափով հիմնադրամ, որը կաջակցի Աֆրիկյան, Կարիբյան կղզիների, Խաղաղօվկիանոսյան երկրների մշակույթի զարգացման ծրագրերին։

Մշակույթը պետք է խրախուսվի նաև որպես ստեղծագործական մոտեցման շարժանիվ։ Հավանաբար քչերին է հայտնի այն մասին, որ Եվրոպայում մշակութային ոլորտից ստացված հասույթն ավելի մեծ է, քան այն, որը ստացվում է քիմիական արդյունաբերությունից։ 2003 թ. ԵՄ կողմից անցկացված ուսումնասիրության համաձայն, այդ ոլորտում աշխատում են գրեթե 6 միլիոն եվրոպացիներ՝ միության բնակչության ավելի քան 3 տոկոսը։ Այն նաև խթանում է նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների և հաղորդակցության զարգացումը,

զբոսաշրջությունը և նպաստում է թերզարգացած և հետամնաց տարածաշրջանների վերակենդանացմանը:

Թեև սա մշակույթին վերաբերող առաջին Եվրոպական ռազմավարությունն է, Եվրոպան արդեն սկսել է մեծ ակտիվություն ցուցաբերել այս բնագավառում իր նոր ծրագրերով, ինչպիսիք են «Մշակույթ 2007», «Եվրոպան քաղաքացիների համար», և ավելի հայտնի «Մեդիա» ծրագիրն ու կառուցվածքային այլ հիմնադրամների գործունեությունը:

Տարբեր, բայց միևնույն հենքի վրա

Հիմնարար իրավունքները և փոխադարձ հարգանքը Դալայ Լամայի և Եվրոպական Հանձնաժողովի նախագահ Բարոզոյի միջև կայացած հանդիպման օրակարգի հիմնաքարերն են:

Մշակույթների միջև երկխոսությունն ու կապը շատ կարևոր է առողջ հասարակություն ունենալու համար և ԵՄ-ն նպատակ ունի դարձնել այն 2008 թվականի քննարկման թեմա: «Դպրության իսպանացիները», «զուսանգության անգլիացիները», «ճշտապահ գերմանցիները» և «ինքնավատանքանության անգլիացիները» որակումներ են, որոնք ոչ այլ ինչ են, քան թյուրքնկալումներ, որոնք փոխանցվելով սերնդէսերունդ ժամանակների միջով, հիմք են դառնում արհամարանքի և այլոց հանդեպ կասկածամտության դրսերման համար:

Տարբեր եթնիկական պատկանելիությունը և տարբեր կրոնական դավանանքները նպաստում են փոխըմբռնման պակասի ձևավորմանը, ինչպես Եվրոպայի սահմաններից դուրս գտնվող ազգերի հետ ունեցած հարաբերություններում, այնպես էլ ներգաղթածների հետ փոխհարաբերություններում: Եվրոպացիներ մինչ այժմ նույնացնում են իսլամը և իսլամիզմը:

Մշակութային տարբերությունների առկայությունը փաստ է, որը մշտապես իրեն զգացնել է տալիս այնպիսի ոլորտներում,



ինչպիսիք են մամուլի ազատությունը, ռասիզմը և խտրականության դեմ պայքարը, գաղթական բնակչության ինտեգրումն ու կրթությունը:

Միջնակութային երկխոսությունը տարբերությունների հայտնաբերման և ընդհանուր հիմք ստեղծելու համար լավագույն միջոց է:

Այսպիսով, միջնակութային երկխոսությունը կդառնա 2008 թվականի Եվրոպական քննարկման հարց: Դրա համար, ԵՄ ձեռնամուխ է եղել բարձրացնել Եվրոպայում տեղեկատվության աստիճանը այս կարևոր երկխոսության մասին և խրախուսել ընդհանուր արժեքները և փոխադարձ հարգանքի գաղափարը, խրախուսել քննարկումները և մտքերի փոխանակմանը:

ԵՄ-ը 2008 թվականի ընթացքում նախատեսում է հատկացնել տաս միլիոն Եվրո տեղեկատվական արշավի և տարբեր միջոցառումների համար, որոնց առանցքը կրոնական երկխոսության հարցերն են: Ոսումնասիրությունները և խորհրդակցությունները կապահովեն այս նախագծի շարունակականությունը: Տարին ավարտվելու է քաղաքացիական հասարակության, կրոնական ներկայացուցիչների և քաղաքական գործիչների մասնակցությամբ անցկացվող միջնակութային ֆորումով:

ԵՎՐՈՊԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՎՐՈԲԱՐՈՄԵՏՐ. ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԸ ԿՈՂՄ ԵՆ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՄԵՐԻ ՀԵՏ ԱՎԵԼԻ ՍԵՐՏ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Եվրոպական հանձնաժողովի խնդրանքով Եվրոբարոմետրի կատարած հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ ԵՄ անդամ երկրների քաղաքացիների գերակշիռ մասը կողմ է ԵՄ հարևանների հետ համագործակցությանն ուղղված ջանքերին: Հարցվածների ճնշող մեծամասնությունը գտնում է, որ կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարում, շրջակա միջավայրի և եներգետիկայի, տնտեսական զարգացման, ներգաղթի, ժողովրդավարության, կրթության ոլորտներում հարևանների հետ սերտ համագործակցելը կարևոր է: Եվրոպացիների մեծ մասը հավատում է, որ ԵՄ-ի օժանդակությունը իր հարևաններին կարող է օգնել ժողովրդավարության և խաղաղության տարածմանը միության սահմաններից դուրս, և գրեթե կեսը գտնում է, որ հարևան երկրներն իսկապես ցանկանում են համագործակցել ԵՄ-ի հետ ներքին բարեփոխումներ իրականացնելու նպատակով:

Արտաքին հարաբերությունների և Եվրոպայի հարևանության քաղաքականության հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդեմերը ասել է. «Այս հարցում հաստատում է, որ «Եվրոպական հարևանության քաղաքականության» (ԵՀՔ) վերաբերյալ տեղեկացվածությունը աճում է ԵՄ-ի ներսում, և որ Եվրոպացիները կհասկանան մեզ հետ ընդհանուր ծովային և ցամաքային սահմաններ ունեցող երկրների հետ ավելի սերտ հարաբերությունների հաստատման օգուտները: Անկախ այն հանգամանքից, թե՝ որ ոլորտում մենք կխորացնենք համագործակցությունը՝ հանցագործության դեմ պայքարի, առևտության և եներգետիկայի թե գաղթի, մենք կունենանք զգալի օգուտներ մեր և մեր հարևանների համար:

Նաև նաև ավելացրել է. «ԵՀՊ-ը քաղաքականություն է, որն ապահովում է երկողմանի հաղթանակ. օգնելով մեր մերձավոր հարևաններին հասնել բարօրության և կայունութան՝ մենք Եվրոպան դարձնում ենք ապրելու առավել լավ վայր: Ես հուսով եմ, որ ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մարդիկ կիասկանան, որ այս քաղաքականությունը մեզ բոլորիս դարձնում է ավելի ապահով, և որ Եվրոպայի հարևանության քաղաքականությունը լիովին արդարացնում է իրեն:

Հարցման հիմնական արդյունքները հետևյալն են.

- Հարցվածների ճնշող մեծամասնությունը կարևոր կամ շատ կարևոր է համարում հարևան երկրների հետ համագործակցությունը կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարում (89%), շրջակա միջավայրի և էներգետիկայի ոլորտում (86%), տնտեսական զարգացման ոլորտում (85%), ժողովրդավարության ոլորտում (82%), կորության ոլորտում (81%) և ներգաղթի ոլորտում (71%):
- Էական աջակցություն են գտել նաև քաղաքականության քաղաքական ասպեկտները. 73%-ը հավատում է, որ ԵՄ-ն կարող է օժանդակել այդ երկրներում ժողովրդավարության զարգացմանը, 67%-ը հավատում է, որ հարևան երկրներին օժանդակությունը կնվազեցնի Եվրոպայում պատերազմի և հակամարտությունների վտանգը, իսկ 62%-ը գտնում է, որ հարևանների հետ սերտ համագործակցութունը կարող է կրծատել ապօրինի ներգաղթը:
- Օգուտների և եկամուտների վերաբերյալ՝ հստակ մեծամասնությունը՝ 61% գտնում է, որ հարևանների հետ համագործակցությունը կարող է փոխադարձաբար շահավետ լինել ԵՄ-ի և նրա հարևանների համար, սակայն 79%-ը անհանգստացած է այդ համագործակցության համար ծախսերի համար. 61%-ը գտնում է, որ հարևանների բարգավաճմանն օժանդակելը կխթանի ԵՄ-ն բարգավաճումը՝ 74%-ը կարծում է, որ հարևաններին օժանդակելը թույլ կտա ԵՄ-ն ընկերություններին ընդլայնվել նոր շուկայում: Մյուս կողմից, 45%-ը անհանգստացած են, որ հարևան երկրներում բարեփոխումներին աջակցելը կարող է վտանգել ԵՄ-ի խաղաղությունը և կայունությունը:

➤ ԵՅՔ վերաբերյալ տեղեկացվածությունը աճել է անցյալ տարվա համեմատությամբ. այժմ 5 պատասխանողներից մեկը առնվազն լսել է քաղաքականության մասին:

Հարցումը հիմնված է 27000 հարցազրույցների արդյունքների վրա, որոնք անցկացվել են 2007թ. մայիսի 25-ից հունիսի 30-ը 27 անդամ երկրներում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ և ՀԱՆՏԵԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ (EUi)

Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունը Եվրոպական իրավունքի եւ հանտեգրման կենտրոնում (ԵԻԻԿ) բացեց Եվրոպական տեղեկատվական կենտրոն:

«Կենտրոնի նպատակն է հետաքրքրված անձանց համար Եվրամիության մասին մյուլեր ապահովելը: Այսուհետ ԵՄ պաշտոնական իրատարակությունների գրասենյակը Հայաստան կուղարկի տպագրված բոլոր փաստաթղթերից մեկ կամ մի քանի օրինակ, մեր երկիրն էլ, իր հերթին, իր բոլոր տեղեկատվական փաստաթղթերը կուղարկի ԵՄ», - ասաց Հայաստանում ԵՅ պատվիրակության գործերի ժամանակավոր հավատարմատար Ռաուլ դե Լուգենբերգերը:

EUi-ի բացման մասին պայմանագիրը ստորագրեցին Հայաստանում ԵՅ պատվիրակության գործերի ժամանակավոր հավատարմատար Ռաուլ դե Լուգենբերգերը եւ Եվրոպական իրավունքի եւ հանտեգրացիայի կենտրոնի (ԵԻԻԿ) տնօրեն Արթուր Ղազինյանը:

Եվրոպական հարեւանության քաղաքականության Գործողությունների ծրագրի 2007 թ-ի Միջոցառումների ծարգրով նախատեսված է «քննարկել Երեւանում Եվրատեղեկատվական հաղորդակցման կենտրոն հիմնելու հնարավորությունները», որի նպատակն է լինելու «Գործարար միջավայրի բարելավումը»: Միջոցառման իրականացման համար պատասխանատու է

Առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունը, սակայն ԵԻԻԿ տնօրեն Արթուր Ղազինյանն ասաց, որ ԵՄ նախաձեռնությանը ոչ մի պետական մարմին չի մասնակցել:

«Նախաձեռնությունը մերն էր: Մեր կենտրոնը պաշտոնապես դիմել էր Եվրոպական հանձնաժողովի գրասենյակ՝ խնդրելով ստեղծել Եվրոպական տեղեկատվական կենտրոն Երեւանում, քանի որ այն արդեն գործում է նաեւ ԵՄ անդամ եւ ոչ անդամ շատ երկրներում: Իհարկե, մենք համագործակցում ենք պետական մարմինների հետ, սակայն ԵՄ-ի ստեղծմանը նրանք չեն մասնակցել», - ասաց Արթուր Ղազինյանը:

Եվրոպական հանձնաժողովը ԵՄ երկրներում, ինչպես նաեւ ԵՄ անդամ չհանդիսացող պետություններում հիմնել է Եվրոպական տեղեկատվության կենտրոններ, որոնք կոչվում են «ЕУ» (նախկինում՝ Եվրոպական փաստաթղթային կենտրոններ (European Documentation Centres – EDCs)):

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

ԵՄ տեխնիկական օգնության կոորդինացման բաժնի կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ

Եվրոպական Հարևանության քաղաքականության համատեքստում վարչական բարեփոխումների ընթացքն արագացնելու, հանրային քաղաքականությունների մշակմանն ու իրականացմանն աջակցելու նպատակով, 2006թ. նոյեմբերին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի կողմից որոշվեց ինստիտուցիոնալ զարգացման թվինինգ և թայերս գործիքները կիրառել Հայաստանում:

Այդ գործիքների համակարգումն իրականացվում է Հայաստանում թվինինգի ծրագրերի կառավարման գրասենյակի կողմից, որը ստեղծվել է 2007թ.-ին ՀՀ

ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ԵՄ տեխնիկական օգնության կոորդինացման բաժնում:

Վերոնշյալ գործիքների արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ԵՄ տեխնիկական օգնության կոորդինացման բաժնին տրամադրվել է երեք նոր հաստիքներ և ՀՀ բոլոր պետական կառավարման մարմինների կողմից նշանակվել են Թվինինգ և Թայեքս գործիքների թվով 38 պատասխանատուներ: Այդ պատասխանատուների անդրանիկ հանդիպումը տեղի է ունեցել սույն թվականի հոկտեմբերի 22-ին Կոնգրես հյուրանոցում, որը կազմակերպել էր ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ԵՄ տեխնիկական օգնության կոորդինացման բաժինը: Միջոցառման կազմակերպմանն աջակցել էր ԵՅ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում Թվինինգի և Թայեքս ծրագրերի ղեկավարման գրասենյակի ստեղծմանը» ծրագրով: Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ պետական կառավարման մարմինների և Հայաստանում Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակության ավելի քան 50 ներկայացուցիչներ: Այն ուներ տեղեկատվական-խորհրդատվական բնույթ և միտված էր մասնակիցներին տրամադրելու առավել մանրամասն տեղեկատվություն վերոնշյալ գործիքների վերաբերյալ:

Բացի այդ, ս.թ. նոյեմբերի 27-ին Անի հյուրանոցում տեղի ունեցավ Թվինինգ գործիքի իրականացման սկիզբն ազդարարող աշխատանքային հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ պետական կառավարման մարմինների, Հայաստանում Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակության, Հայաստանում տարբեր երկրների դեսպանատների, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաև ԵՄ անդամ երկրների դեսպաններ և Թվինինգ ծրագրի ազգային պատասխանատուներ:

Հանդիպման նպատակն էր պաշտոնապես ազդարարել Թվինինգ գործիքի մեկնարկը, որի ընթացքում Եվրոպական Հանձնաժողովի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչները մասնակիցներին ներկայացրեցին գործիքի ծրագրավորման ժամանակացույցի և կիրարկման վերաբերյալ տեղեկատվություն:

Իրավական խորհրդատվության հայ-Եվրոպական կենտրոն AEPLAC

Տնտեսական քաղաքականության համառոտ տեղեկություններ

Հանդիսանալով ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և Tacis-ի շրջանակներում իրականացվող խոշորագույն ծրագրերից մեկը և իր կազմում ընդգրկելով ավելի քան 30 աշխատակիցներ՝ AEPLAC-ի առաքելությունն է «աջակցել Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացմանը ԱՐԿ, ԳՐՀ և ԵՐՁ շրջանակներում», ինչը լիովին համահունչ է Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականություններով սահմանված գերակայությունների հետ: AEPLAC-ի հիմնական նպատակներն են աջակցել ՀՀ կառավարությանը Հայաստանի և ԵՄ-ի միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի իրագործման հարցում, ինչպես նաև տրամադրել տնտեսական քաղաքականության և իրավական հարցերով խորհրդատվություն հիմնարար ռազմավարական նշանակություն ունեցող այն հարցերի շրջանակներում, որոնք ազդում են Հայաստանի տնտեսության զարգացման, Հայաստանում բարեկեցության ապահովման, ժողովրդավարության կայացման, ԵՄ-ի հետ համագործակցության ընդլայնման և այլ գերակա խնդիրների վրա:

Հաշվի առնելով այն, որ Հայաստանի ԵՄ ինտեգրումը ոչ թե ինքնանպատակ է, այլ միջոց՝ Հայաստանում ներքին բարեփոխումների իրականացման համար, ՀՀ կառավարությունը որդեգրել է Եվրախնտեգրման ուղին՝ ապահովելու Հայաստանում սոցիալ-տնտեսական կայուն զարգացումը, օրենսդրության և կառույցների համապատասխանեցումը ԵՄ չափանիշներին և ընդհանուր առնամբ Եվրոպական արժեքներին համահունչ բարեկեցիկ կյանքի երաշխավորումը հայ ժողովրդի համար:

Այսպիսով, հանդես գալով որպես ՀՀ կառավարության՝ ԵՄ հարցերի վերաբերյալ հիմնական «խորհրդատուն»՝ AEPLAC-ն օժանդակություն է ցուցաբերում պետական մարմիններին Եվրախնտեգրման գործընթացի

իրականացման հարցում: Կենտրոնի կողմից ցուցաբերված օժանդակությունն այս թափականին կարծ ժամանակահատվածում արդեն իսկ հանգեցրել է տեսանելի արդյունքների:

Այս հեռահար նպատակներին հասնելու համար 2003 թվականից ի վեր AEPLAC-ն իր բոլոր ռեսուրսներն ուղղել է ՀՀ կառավարության կողմից գՅՅ-ով ստանձնած պարտավորությունների իրագործման գործընթացին օժանդակելուն: Այս համատեքստում, ՀՀ կառավարության և AEPLAC-ի մեջագույն նվաճումներից մեկը ԵՄ անդամակցության մեթոդաբանության օգտագործմամբ՝ ԳՅՅ իրականացման ազգային ծրագրի նշակումն ու ՀՀ կառավարության կողմից դրա հաստատումն է:

Իր գոյության ավելի քան յոթ տարիների ընթացքում AEPLAC-ի աշխատակազմում ընդգրկվել են Հայաստանի առաջադեմ փորձագետները, ինչպես նաև ստեղծվել է համախոհների ստվար բանակ, որոնք AEPLAC-ի հետ միասին իրենց ներդրումն են կատարում Հայաստանի զարգացման գործընթացում:

Ծնորհիվ կենտրոնի կողմից կատարված քրտնաշան աշխատանքի՝ այն ծեռք է բերել պետական, ինչպես նաև միջազգային մարմինների և կառույցների վստահությունը որպես հուսալի գործընկեր, ինչի մասին է վկայում նաև 2007 թվականի մայիսի 2-ին «Եվրոպական շարժում» միջազգային ՀԿ-ի կողմից «Տարվա Եվրոպական ներդրում» մրցանակի շնորհումը AEPLAC-ի թիմին: Ավելին, Եվրոպական հանձնաժողովի կողմից Հայաստանում ԵՄ միջամտությունների ընտրովի ուսումնասիրության շրջանակներում AEPLAC-ը ճանաչվել է որպես «հաջողված պատմություն»: Բացի այդ, ԵՅՔ ընթացիկ հաշվետվության մեջ Հայաստանի մասում նշված է միայն ԵՅ Հարկային ուղեցույցերի հիման վրա AEPLAC-ի կողմից իրականացվող վարչական գնահատման հաշվետվությունը:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՅՅ) իրականացման ազգային ծրագիր

ՀՅ կառավարությունը որդեգրել է ԵՄ ինտեգրման ուղին՝ ապահովելու եվրոպական երկրներին հարիր բարեկեցիկ կյանք, ժողովրդավարական սկզբունքների և օրենքի գերակայություն, քաղաքացիների շահերի, մարդու իշխանության իրավունքների և ազատությունների պաշտպանություն, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման դիմամիկ և կայուն ընթացք: Այս ամենին առավել արդյունավետ կերպով հասնելու ուղիներից մեկը 1996 թվականին Հայաստանի և Եվրոպական Համայնքների միջև ստորագրված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) իրականացումն է:

Այս համատեքստում, 2004 թվականին ՀՅ կառավարությունն ընդունեց որոշում ԳՀՀ իրականացման ազգային ծրագիր (ԱԾ) մշակելու մասին: Կառավարության դիմումով AEPLAC-ը մշակեց Ազգային ծրագրի մանրամասն կառուցվածքը և ներկայացրեց Համակարգող հանձնաժողովին: Այս բավական բարդ գործընթացն իրականացվեց 24 աշխատանքային խմբերի, ինչպես նաև ՀՅ կառավարության որոշմանը ստեղծված Համակարգման հանձնաժողովի կողմից՝ մոտ 200 պետպաշտոնյաների մասնակցությամբ և ՀՅ վարչապետի նախագահությամբ: Որոշման համաձայն՝ AEPLAC-ը հանդիսանում էր գործընթացին տեխնիկական օժանդակություն ցուցաբերող մարմին՝ աջակցելով թե՛ Համակարգման հանձնաժողովին, թե՛ աշխատանքային խմբերին:

Ազգային ծրագիրը հստակ ներկայացնում է երկրի զարգացման համար կարևորագույն 29 ոլորտները կարգավորող ՀՅ և ԵՄ օրենսդրությունների համապատասխանության մակարդակը, դրանց մոտարկման ուղիներն ու գործակառույցները, համապատասխանեցման ժամկետները, կիրառվելիք իրավական տեխնիկան, ինչպես նաև նախանշում է այն մարմինները, որոնք պատասխանատու են Ազգային ծրագրի հետագա իրականացման համար:

Ազգային ծրագրի նախագիծը ներկայացվել է ՀՅ կառավարությանը 2005 թվականի սեպտեմբերին, իսկ 2006 թվականի հունվարին այն շրջանառվել է համապատասխան պետական մարմինների միջև՝ պաշտոնական դիտողություններ ներկայացնելու նպատակով: Ի պատասխան ներկայացվել են ավելի քան 400 դիտողություններ, որոնց շուրջ կազմակերպվել են մոտ 200

քննարկումների համապատասխան գերատեսչությունների և պաշտոնյաների հետ՝ AEPLAC-ի փորձագետների մասնակցությամբ:

Ազգային ծրագիրն ընդունվեց 2006 թվականի մարտի 23-ին ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ:

Վարչական կարողությունների գնահատում

Համապատասխան վարչական կարողությունների առկայությունը հանդիսանում է օրենսդրական հաջող բարեփոխումների իրականացման նախապայմաններից մեկը: Ազգային ծրագիրը նախատեսում է հիմնականում օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ, որոնք պետք է իրականացվեն վարչական կարողությունների բարեփոխումներին գուգահեր:

Որպես առաջին քայլ AEPLAC-ը փորձարկել է *Acquis-ի* (Եվրոպական ընդհանուր օրենսդրության) «Ապրանքների ազատ տեղաշարժ» գլխի շրջանակներում վարչական կարողությունների գնահատման մեթոդաբանությունը: 2007թ. փետրվարի 2-ին կայացած համապատասխան փակ աշխատաժողովի ժամանակ հաշվետվության նախագիծը ներկայացվել է բոլոր շահագրգիռ կողմերին: Արդեն իսկ այս փուլում գործողությունն ունեցել է բավականին մեծ ազդեցություն, ինչը հիմք է դրել դրա կենսունակության ապահովմանը: Դիմք ընդունելով հաշվետվությունում ներկայացված առաջարկությունները՝ ՀՀ առևտիի և տնտեսական զարգացման նախարարությունը ներկայումս միջոցներ է ձեռնարկում նշված առաջարկություններն իրականացնելու, մասնավորապես Ստանդարտների ազգային ինստիտուտի կարգավիճակը փոխելու և անկախ մարմնի կարգավիճակ տալու ուղղությամբ: Ավելին, նախարարությունն արդեն իսկ որոշակի միջոցառումներ է ձեռնարկել CE համապատասխանության նշանի միակողմ ճանաչման ուղղությամբ:

Ներկայումս, AEPLAC-ը, համաձայն ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հանձնարարականների, իրականացնում է ՀՀ պետական մարմինների վարչական կարողությունների գնահատումը վարչումից ավելի ոլորտներում,

ինչը լավ իիմք կծառայի հետագա, ԵՄ ինտեգրմանն ուղղված վարչական բարեփոխումների իրականացման համար: Մի շարք ոլորտների, ինչպիսիք են Մրցակցություն և պետական օժանդակություն, Վիճակագրություն, Կապիտալի ազատ տեղաշարժ, Ֆինանսական վերահսկողություն, Տնտեսական և դրամական քաղաքականություն, Բյուջետային հարցեր, Պետական գնումներ, Ավիացիա, Գյուղատնտեսություն, Սոցիալական և զբաղվածության քաղաքականություն, հաշվետվությունները վերջնականացված և ներկայացված են շահառուներին: Մնացած ոլորտներում հաշվետվությունների աշխատանքները նախատեսվում է ավարտել 2008 թվականի փետրվար ամսին:

Քետագայում, այս հաշվետվությունները իիմք կիանոիսանան ներկա իրավիճակի վերաբերյալ հաշվետվության համար, որը կներկայացնի ԵՄ ինտեգրմանն ուղղված բարեփոխումների առաջընթացը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրամիության օրենսդրությանը համապատասխանեցնելու մեթոդաբանություն

ԵՄ ինտեգրման գործընթացի իրականացմանն ուղղված բոլոր փաստաթղթերում (ԵՅՔ գործողությունների ծրագիր, ԳՀՀ իրականացման ազգային ծրագիր) սահմանվում են ՀՀ օրենսդրությունը ԵՄ օրենսդրության հետ համապատասխանեցնելուն ուղղված միջոցառումները, որոնց հաջող իրականացման դեպքում Հայաստանը կկարողանա ներմուծել արդյունավետ գործող և եվրոպական չափանիշներին համահունչ ինստիտուտներ:

Օրենսդրության համապատասխանեցումը համալիր և բարդ գործընթաց է, որը պահանջում է մեծածավալ ռեսուրսներ, ինչպես նաև հստակորեն սահմանված մեթոդաբանություն:

Այսպիսով, AEPLAC-ը մշակել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրամիության օրենսդրությանը համապատասխանեցնելու մեթոդաբանության նախագիծը, որի հիմնական նպատակն է ներկայացնել ազգային օրենսդրությունը Եվրամիության օրենսդրական և ինստիտուցիոնալ պահանջներին համապատասխանեցնելու գործակառույցները և աջակցել ազգային իրավական տեխնիկայի կանոնների կատարելագործմանը:

Մեթոդաբանության հիմքում դրված է ԵՄ անդամ պետությունների լավագույն փորձը: Մասնավորապես, մեթոդաբանության անկյունաքարտն է հանդիսանում օրենսդրության մշակման բնագավառում Մեծ Բրիտանիայի փորձը: Մասնավորապես, մեթոդաբանությամբ առաջարկվող կարևորագույն գործակառույցներից մեկը, որը պետք է կիրառվի իրավական ակտի մշակման ընթացքում՝ կարգավորման ազդեցության գնահատումն է (ԿԱԳ): ԿԱԳ-ի միջոցով գնահատվում է իրավական ակտի ազդեցությունը տնտեսության, բնապահպանության, մրցակցության, փոքր և միջին ձեռնարկատիրության և այլ ոլորտների վրա և սահմանվում է կարգավորման լավագույն տարրերակը՝ ապահովելով ամբողջ գործընթացի թափանցիկությունը:

Օժանդակություն իրավական թարգմանչական կենտրոնի ստեղծմանը և կայացմանը

ՀՅ կառավարությունը 2007 թվականին ձեռնամուխ եղավ ստեղծել իրավական թարգմանչական կենտրոնը, որը ՀՅ օրենսդրության ԵՄ օրենսդրության հետ համապատասխանեցման գործընթացում խաղալու է առանցքային դեր՝ ապահովելով ԵՄ համապատասխան օրենսդրության պաշտոնական թարգմանությունները հայոց լեզվով և ՀՅ համապատասխանեցված օրենսդրության թարգմանությունները անգլերեն լեզվով:

Այս գործունեության շրջանակներում AEPLAC-ը ՀՅ արդարադատության նախարարության հետ համատեղ մշակեց անհրաժեշտ օրենսդրական ակտերի փաթեթը, որով և «ՀՅ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմում ստեղծվեց թարգմանչական կենտրոնը: Կենտրոնի կայացման նպատակով իրականացվեց TAIEX ծրագիրը, որի ֆինանսավորմանը Հայաստան այցելեցին Սլովակիայի իրավական թարգմանչական կենտրոնի ներկայացուցիչները և տեղում ներկայացրեցին իրենց փորձն այս ոլորտում և տրամադրեցին պահանջվող խորհրդատվությունը:

Ավելին, մշակվեցին Կենտրոնի աշխատանքային ծրագիրը, անհրաժեշտ այլ ենթաօրենսդրական ակտերը: Մշակվել են նաև անձնակազմի համալրման համար հարցաթերթիկները և դրանց հիման վրա իրականացվում են մրցույթները և անձնակազմի ընտրությունը:

Կենտրոնի վերանորոգման աշխատանքների համար 2007 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել էր մոտ 90.000 հազար ԱՄՆ դոլար, իսկ 2008 թվականին ՀՀ պետական բյուջով նախատեսված է ևս 330.000 ԱՄՆ դոլար թարգմանությունների իրականացման համար:

AEPLAC-ի միջնորդությանք ձեռք է բերվել թարգմանչական գործընթացում օգտագործվող TRADOS ծրագրային փաթեթը, որը կտեղադրվի Կենտրոնի համակարգիչների վրա: Թարգմանվել և ՀՀ ստանդարտների ինստիտուտի կողմից հաստատվել է թարգմանությունների իրականացման ԵՄ համապատասխան ստանդարտը: Կենտրոնի պաշտոնական բացումը տեղի կունենա 2008 թվականի առաջին եռամսյակում:

Օժանդակություն օրենսդրական և քաղաքականության համապատասխանությանը

AEPLAC-ի գործառույթներից մեկն է օրենսդրության և քաղաքականության համապատասխան գործընթացում ՀՀ կառավարությանը օժանդակության տրամադրումը: Այս գործողության շրջանակներում AEPLAC-ը սերտորեն համագործակցում է ՀՀ առևտուրի և տնտեսական զարգացման, արդարադատության, գյուղատնտեսության, ֆինանսների և այլ նախարարությունների, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի հետ:

2007 թվականի ընթացքում, համագործակցելով իր շահառումների հետ, AEPLAC-ը մշակել է օրենքների նախագծեր, որոնց շարքում են «Արժեթղթերի մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Գովազդի մասին», «Խաղողի հումքից պատրաստված ոգելից խմիչքների մասին» և այլ օրենքների նախագծերը: Բոլոր օրենքները մշակվել են՝ հիմնվելով ԵՄ համապատասխան իրավական ակտի վրա և բավարարում են ամենախստապահանջ ԵՄ չափանիշներին, ինչի մասին են վկայում միջազգային

կառուցների կարծիքները: Գրեթե բոլոր օրենքների նախագծերն արդեն իսկ ընդունվել են ՀՀ ազգային ժողովի կողմից:

Այսպես օրինակ, «Արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի ընդունմանը հաջորդեց OMX Sweeden արժեթղթերի Եվրոպական խոշոր օպերատորի մուտքը Հայաստան և վերջերս OMX Sweeden-ի հետ ստորագրվեց արժեթղթերի բորսայի վաճառքի պայմանագիրը: «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը նույնպես համապատասխանում է դաշտը կարգավորող ԵՄ իրավական ակտերի պահանջներին: Օրենքի ընդունումը խթանեց վարչական բարեփոխումների իրականացումը, ինչի արդյունքում ՀՀ կենտրոնական բանկում ստեղծվեց ապահովագրության ոլորտի կարգավորման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումը: Միևնույն ժամանակ, Եվրոպական խոշոր ապահովագրական ընկերություններ արդեն իսկ ցանկություն են հայտնել մուտք գործել հայկական շուկա:

AEPLAC-ը մեծ ջանքեր է գործադրում քաղաքականությունների մշակման բնագավառներում: Այս գործունեության շրջանակներում մշակվել և շահառուներին են ներկայացվել «Վենչուրային գործունեության զարգացման», «Սպառողների պաշտպանության», «Կայուն տնտեսական զարգացման» և այլ հայեցակարգերի նախագծերը, որոնցով ՀՀ պետական մարմիններին փոխանցվում է ԵՄ լավագույն փորձը:

ՀՀ Արդարադատության նախարարություն

2007 թ. 4-րդ եռամսյակում ՀՀ արդարադատության նախարարությունը հիմնականում զբաղվել է ՀՀ Եվրոպական հարևանության քաղաքականության շրջնակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված, ինչպես նաև ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված 2007 թվականի ընթացքում իրականացվելիք առաջնայնությունների և միջոցառումների մասին» թիվ 927-Ն որոշման

հավելվածով հաստատված և նախարարությանը վերապահված միջոցառումների իրականացնամբ:

Նախարարությունը նաև մշակել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը և կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրեքների նախագծերը և «Հայաստանի Հանրապետության նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ ՆՀ -174-Ն իրամանագրում լրացում» կատարելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի իրամանագրի նախագիծը:

Նշված փաթեթը նախատեսում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում մի շարք բնագավառներում, ինչպես նաև նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների պարտադիր կազմակերպում:

2008 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարությունը կշարունակի իրականացնել ԵՄ ՀՀ գործողությունների ծրագրով իր իրավասությանը վրաբերող միջոցառումները: Նախարարությունը նաև կմշակի կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգերը, ըստ բնագավառների, սահմանելու, ինչպես նաև հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ՀՀ և Եվրոպական համայնքների և դրանց անդամ պետությունների միջև գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրի իրականացման 2006-2009 թվականների ազգային ծրագրերը, որով նախատեսված է ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ օրենսրությանը, ինչպես նաև ՀՀ քաղաքականություններին և ինստիտուցիոնալ կառույցներին՝ նախարարությունը կստեղծի «Թարգմանությունների կենտրոն» առանձին ՊՈԱԿ, որի հիմնական առաքելությունը կլինի ԵՄ օրենսդրությանը հայերեն և ՀՀ օրենսդրությունն անգլերեն թարգմանությունների իրականացումը